I.

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ

ՎԱՐԱԿԻՉ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱԿԱՑՈՂՈՒԹԻՒՆ

II.

ԵՂՋԻՒՐԱՒՈՐ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ

ԺԱՆՏԱԽՏ

ԿԱԶՄԵՑ

Գ. ՂԱԶԱՐԵԱՆ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի
1904

I.

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ

ՎԱՐԱԿԻՉ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱԿԱՑՈՂՈՒԹԻՒՆ

II.

ԵՂՋԻՒՐԱՒՈՐ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ

ԺԱՆՏԱԽՏ

ԿԱՋՄԵՑ
Գ. Ղ.

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի
1903

Дозв. цензурою, 17 Ноября 1903 г. г. Тифлисъ.

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹԻՒՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍԿԱՑՈՂՈՒԹԻՒՆ *)

Ո՞ր հիւանդութիւններն են կոչւում վարակիչ եւ ի՞նչ վնասներ կարող են յառաջանալ նրանցից։ Ինչի՞ց են նրանք յառաջանում։ Ի՞նչ բան է վարակիչ նիւթը եւ ո՞ր տեղից է նա յայտնւում յանկարծակի.

Անբերրութիւնից և սովից յետոյ ընտանի կենդանիների վարակիչ հիւանդութիւնները գիւղացիների և անասնապահների համար ամենածանր դժբաղդութիւններից մէկն է, որովհետև անտեսութեանը մեծամեծ վնասներ է պատճառում։ Սա էլ իր տեսակի մի հրդեհ է, միայն հրդեհ մի

*) Այս գրքոյկը կազմելիս ի նկատի ենք ունեցել հետեւեալ աշխատութիւններ.

1. „Ветеринарная наука въ примѣненіи къ сельскому хозяйству“ Мурашкинцева.
2. „Бесѣды о заразныхъ болѣзняхъ нашихъ домашнихъ животныхъ“ Ельманова Н. В.
3. „Скотолѣчебникъ“ Рольвеса.
4. «Վարակիչ հիւանդութիւններ եւ նրանց դրոյնը» Բժ. Վ. Ա.

այնպիսի շինութեան, որ շինուել է ոչ թէ մէկ երկու տարուայ մէջ, այլ, դուցէ, անասնապահի ամբողջ կեանքի ընթացքում, և որ մեծաւ մասամբ ապահովուագրած չէ լինում։ Այստեղից պարզ հասկանալի է, թէ որքան անհրաժեշտ մի բան է իւրաքանչիւր անասնատիրոջ համար կենդանիների այդ հիւանդութիւնների մասին ծանօթութիւն ունենալը, որպէս զի այդպիսով հնարաւոր լինի ժամանակին նախազգուշանալու։

Սովորաբար մենք վարակիչ ենք անուանում այն տեսակ հիւանդութիւնները, որոնք հիւանդ կենդանուց կարող են փոխուել առողջ կենդանիներին կամ մարդուն և կամ, ընդհակառակը, մարդուց կենդանիներին։ Ժողովուրդը վարակիչ հիւանդութիւններին զանազան անուններ է տալիս. օրինակ, փոփոխական, փոփոխուող, կպչող, բայց մենք այստեղ գործ կածենք վարակիչ բառը։

Մեզանից ո՞վ չի լսել այնպիսի հիւանդութիւնների մասին, ինչպիսին են օրինակ սիբիրախտը, թոքախտը, քոսը. բաւական է միայն մի կենդանի, օրինակ՝ եթէ մի

ձի հիւանդանայ, նրա եռեւից անմիջապէս կսկսեն հիւանդանալ և մեռնել ուրիշները։ Վերջապէս ամէն ոք կմտաբերէ, թէ ինչպէս շատ անգամ մի մարդուց վարակուել և հիւանդացել են շատ ուրիշները։ Բացի վերևում յիշուած հիւանդութիւններից կան նաև շատ ուրիշ, նոյնպէս վարակիչ հիւանդութիւններ. այդպիսիներից են ժանտախտը, քերքեշ կամ բուգիա (САПЪ) կոչուած ձիու հիւանդութիւնը, թռչների տարափոխիկ հիւանդութիւնը, կատաղութիւնը, ծաղիկը, դաբաղը, որովայնալուծութիւնը (МЫТЪ) և շատ ուրիշները։

Որովհետև այս հիւանդութիւնների տարածուելուց մեծամեծ վնասներ են յառաջանում, այդ պատճառով ամէն մի մարդու համար խիստ անհրաժեշտ է դաղափար ունենալ մարդկանց առողջութեան, նմանապէս և նրանց տնտեսութեան տարափելի թշնամու մասին։ Առողջութիւնը, որ կեանքի մէջ ամենաթանկագին բանն է, յաճախ վտանգի է ենթարկուում, երբ որ և է վարակիչ հիւանդութիւն կենդանուց անցնում է

մարդուն, որի հետևանքն է լինում երբեմն մինչև իսկ մահ։ Ո՞վ չի լսել, որ եթէ կատաղած շունը կծէ մարդուն, այլ ևս նրան փրկութիւն չկայ, նա կմեռնի և այն էլ սարսափելի տանջանքների մէջ, եթէ ժամանակին նախազգուշութեան համար անհրաժեշտ միջոցներ ձեռք չառնուեն։ Ենթադրենք թէ մի ձի հիւանդ է քերքեշով, այդպիսին անպատճառ կվարակէ նաև շատ ուրիշ ձիերի, կվարակէ նոյն իսկ իրեն խնամող մարդկանց, եթէ իսկոյն չմորթեն. քերքեշով վարակուածները անխուսափելի մահուան են ենթակայ, որովհետև այդ հիւանդութիւնը բժշկելու դեռ ոչ մի միջոց գոյութիւն չունի։ Պատահել են մինչև իսկ դէպքեր, երբ հիւանդութիւնը կենդանուց մարդուն փոխուելով, նորից յետ է դառնում մարդուց կենդանուն. այդ բանը նկատելի է թոքախտի ժամանակ և մարդը կարող է վարակուել այդ հիւանդութեամբ կամ թի, մսի միջոցով, իսկ կենդանին կարող է վարակուել սեղանի մնացորդներից և դուրս թափած անմաքուր ջրերից։ Այսպիսով մենք նկատում ենք, որ

այստեղ հիւանդութիւնը փոխադարձ մէկից միւսին է անցնում։ Կայ ժանտախտ անուանուած մի հիւանդութիւն, որ պատահում է միայն որոճող անասուններին, ուրիշ կենդանիների և մարդու վրայ բոլորովին չի անցնում *)։ Այս հիւանդութիւնն այն աստիճան սարսափելի է, որ եթէ մի անդամ որ և է հօտի մէջ երևան գայ, անպատճառ հօտի $^3/_4$ մասը կկոտորէ։ Ինչպէս քերքեշը, նոյնպէս և ժանտախտը անբուժելի են, ոչ մի բժշկական միջոց չի օգնում։ Բացի մահ պատճառող այս սարսափելի հիւանդութիւններից կան նաև ուրիշ հիւանդութիւններ, որոնք թէպէտ չեն վերջանում մահուամբ, բայց ուժասպառ են անում կենդանուն, նրան աշխատանքի անընդունակ, անպէտք են դարձնում (ինչպէս օրինակ ձիու քոսի ժամանակ), մի որոշ ժամանակուայ ընթացքում

---

*) Մարդու և շների ժանտախտը բոլորովին տարբեր հիւանդութիւններ են, սրանք ոչ մի ընդհանուր բան չունեն եղջիւրաւոր անասունների ժանտախտի հետ։

նրա կաթը գործածութեան համար անպէտք է դառնում, ինչպէս այդ պատահում է կովերի դաբաղ հիւանդութեան ժամանակ։

Ահա հէնց վերևում պարզաբանուած այս հանգամանքները պարզ ցոյց են տալիս, թէ որքան անհրաժեշտ է մարդու, մանաւանդ կենդանիներին շատ մօտ եղողների համար այս հիւանդութիւնների հետ ծանօթ լինելը։ Մարդս պարտաւոր է իմանալ, թէ ինչպիսի ահագին վնասներ կարող են պատճառել իրեն կենդանիների հիւանդութիւնները, պէտք է վարակուելուց զգուշանայ, վերջապէս գաղափար պէտք է ունենայ, թէ մինչև բժշկի գալը, եթէ իսկապէս վարակուելով հիւանդացել է ինքը կամ իւր ընտանի անասունը, ինչպէս պէտք է օգնել։

Մեր նպատակն է այստեղ հաղորդել մեր ընտանի անասունների վարակիչ հիւանդութիւնների և նրանցից յառաջացած վնասների մասին ամենաանհրաժեշտ տեղեկութիւններ։

Նախ տեսնենք, թէ ինչն է այդ հիւանդութիւնները յառաջացնողը։ Մենք յաճախ լսում ենք մարդու մասին, թէ նա մրսել է և հիւանդացել, կերել է հին կամ փչացած, բորբոսնած, թթուած կերակուր, խակ պտուղներ և հիւանդացել է. կենդանիների, մանաւանդ յաճախ ձիերի մասին ասում են, որ նրանք թունաւորուել են ալն. բոլոր այդ պատճառներին են վերագրում թէ մարդկանց և թէ կենդանիների հիւանդութիւնները։ Ճիշտ է, այդ բոլորը զանազան հիւանդութիւններ երևան գալու միջոցին մեծ նշանակութիւն ունեն և այդպիսի պատճառներից է երևան գալիս հասարակ, ոչ վարակիչ հիւանդութիւնները. վարակիչ հիւանդութիւնները, որոնց մասին այժմ խօսելու ենք, բոլորովին ուրիշ պատճառներից են յառաջանում։

Անշուշտ շատերը լսած կլինեն, որ յայտնի վարակիչ հիւանդութիւն՝ «քոս» յառաջացնողը փոքրիկ քոսորդներ են (клещи), որոնք ապրում են կենդանիների կաշուի տակ, այնտեղ մեծ անցքեր են բաց անում,

ձուլեր են դնում, նրանց մարմնի հիւթով են կերակրում և այդպիսով սաստիկ անհանդգստացնում կենդանուն ու ստիպում միշտ քորել։ Քոսորդները պարազիտներ են, այսինքն այնպիսի էակներ, որոնք ունում են ուրիշ կենդանիների հաշուով։ Այդ պարազիտներն այն աստիճան մանր են, որ հասարակ աչքով անկարելի է տեսնել. հարկաւոր է գործածել խոշորացնող ապակի և միայն այն ժամանակ մենք կնկատենք. հէնց այդ պարազիտներն են քոսի հիւանդութեան պատճառը. իբրև ապացոյց այդ բանի, եթէ մենք սպանենք քոսորդները կաշուի տակ որ և է բժշկական միջոցներով, հիւանդութիւնն անպատճառ կդադարի։

Միւս վարակիչ հիւանդութիւններ յառաջացնողը, որոնց մասին մենք առաջ յիշել էինք, նոյնպիսի անտեսանելի պարազիտներ են և միևնոյն ժամանակ այնքան մանր, որ նրանց կարելի է տեսնել միայն մի շարք խոշորացնող ապակիների օգնութեամբ։ Այն գործիքը, որ բաղկացած է մի

ամբողջ շարք այդպիսի ապակիներից և միջոց է տալիս տեսնել 50, 100, 500 և մինչև իսկ 1000 անգամ մեծացրած պարազիտներ, անուանւում է մանրացոյց (микроскопъ) *)։ Մանրացոյցը մօտ ժամանակներս է գտնուած, այդ պատճառով էլ շատ վարակիչ հիւանդութիւնների պատճառներն երկար ժամանակ անծանօթ էր մնացել. միայն վերջերս գիտնականներն այդէն դրականապէս հաստատում են, որ այդ փոքրիկ պարազիտները, որ բակտերիաներ (փայտիկներ) են կոչւում, համարեա մեղ յայտնի վարակիչ հիւանդութիւնների պատճառներն են համարւում։

Մանրացոյցի տակ այդ բակտերիաները երևում են իբրև հասարակ փայտիկներ (ցուպիկներ), ուղիղ կամ ստորակէտի ձե-

---

*) Մանրացոյցի տակ առարկաներն այնքան են մեծանում, որ ճանճը ուղտի չափ է երևում, մրջիւնը ոչխարի չափ, մաղը հատ գերանի և այլն։

ւով պոչաւոր կէտեր կամ ժապաւէններ, որոնք երբեմն պորուն են լինում և մէջը ոչինչ չի երևում։ Այդ բակտերիաները, ինչպէս և քոսի պարազիտները, սնւում են կենդանիների արիւնով և զանազան հիւթերով ու աճում, բազմանում են։ Մի բակտերիայից, եթէ նա ընկել է կենդանու մարմնի մէջ, մի ժամուայ ընթացքում կարող են առաջ գալ տասնեակ հազար բակտերիաներ։ Բակտերիաները բազմանում են սովորաբար հասարակ կերպով երկու կամ մի քանի մասերի բաժանուելով*)։ Որպէս զի

*) Մի փայտիկը կիսւում, երկու է դառնում, յետոյ այս երկուսից ամէն մէկը մեծանում է, հասունանում ու դարձեալ երկու դառնում. վերջիններից իւրաքանչիւրը դարձեալ կիսւում է և այսպէս անվերջ։ Իւրաքանչիւր 20 րոպէում կամ կէս ժամում մի փայտիկը երկու է դառնում։ Եթէ այսպէս մի քանի ժամ չարունակուի, գիտէք ինչ սարսափելի թիւ կստացուի։ Մի բժշկի ասելով, մի մարդ, որի մէջ բակտերիա է մտել, կը պառկի քնելու և առաւօտը կգտրնի 1000 միլիոն բակտերիա մէջը։ Մի հասկացողութիւն տալու հա-

այդ բակտերիաները աճեն և բազմանան, հարկաւոր է նրանց համար նպաստաւոր, յարմարաւոր պայմաններ. այսպէս օրինակ նրանք աճում են միայն այնպիսի տաքութեան մէջ, ինչպիսին գոյութիւն ունի մարդու և կենդանու մարմնի մէջ, հակառակ դէպքում նրանք կոչնչանան, կամ նրանց վարակիչ յատկութիւնը կթուլանայ։

Ո՞րտեղից են յառաջանում այդ բակտերիաները, որոնք վարակիչ հիւանդութիւնների պատճառ են հանդիսանում։ Մենք շատ անգամ տեսնում ենք, որ երբ մի քաց ամանի մէջ երկար ժամանակ ջուր, կաթ, գինի, հաց ենք թողնում, փչանում են.— ջուրը հոտում է, գինին, կաթը թթւում, հացը բորբոսնում։ Ի՞նչ է սրա պատճառը։

մար կասենք, որ եթէ այդքան բակտերիաներ չարենք իրար ետևից, կստանանք մի թել, որ 100 վերստ երկարութիւն կունենայ, իսկ 24 ժամից յետոյ այդ թելն այնքան երկար կլինի, որ կարելի կլինի նրան 10—15 անգամ փաթաթել երկրի շուրջը։ Նա 10,000 փութ ծանրութիւն կունենայ։

Եթէ միևնոյն ջուրը կամ կաթը լցնենք մի որ և է շշի մէջ, բերանը փակենք բամբակէ խցանով և խցանով փակելուց յետոյ զմռսով էլ կնքենք, որ օդ չմտնի և ապա ամբողջը տեղաւորենք ջրով ամանի մէջ ուլաւ եփենք, շշի մէջ եփած ջուրը կամ կաթը որքան էլ պահենք, թէկուզ մի ամբողջ տարի, չի փչանայ և ամբողջ ժամանակ մաքուր և թարմ կմնայ։ Այստեղից երևում է, որ փչանալու պատճառը գտնուում է օդի մէջ, սուր միշտ գտնուում են հասարակ աչքով անտեսանելի անթիւ անհամար բակտերիաներ, որոնք ընկնելով ջրի և կաթի մէջ և այնտեղ էլ բազմանալով, փչացնում են։ Ահա թէ ինչու համար էինք մենք եռացնում ջուրը, եթէ չեռացնէինք և այդպիսով չոչնչացնէինք նրանում բակտերիաները, նա անպատճառ կփչանար։ Այդպէս էլ կենդանիները, երբ նրանք շնչում են օդ, խմում են ջուր, ուտում են խոտ, հաց, բանջարեղէն և այլն, ի հարկէ դրանց հետ միասին նրանց մարմնի մէջ ընկնում են օդի մէջ եղած բազմաթիւ բակտերիաներ։

Բայց պէտք է իմանալ, որ օդի մէջ գտնուող ոչ բոլոր բակտերիաները թունաւոր են կամ յառաջացնում են վարակիչ հիւանդութիւններ. կան այնպիսիները, որոնք ամենաչնչին վնաս անդամ չեն պատճառում կենդանուն, նմանապէս և մարդուն։ Այսպէս օրինակ դիտնականները մէկ անդամ վեր են առել մարդու բերանից թուքը, հետազօտել են մանրացուցով և ահա թէ ինչ են տեսել. թուքի մէջ գտել են բազմաթիւ զանազանակերպ բակտերիաներ, որոնք տարբերուում են միմեանցից թէ իրենց ձևով և թէ յատկութեամբ. այդ բոլորովին անվնաս ճանաչուածների մէջ կային նաև այնպիսի բակտերիաներ, որոնք մարդու առողջութեան համար սաստիկ թունաւոր են և վտանգաւոր։ Ահա հենց այս վերջին բակտերիաներն են առաջ բերում զանազան վարակիչ հիւանդութիւններ, բայց նրանք չեն ցոյց տալիս իրենց ներգործութիւնը այնքան ժամանակ, մինչև որ կբազմանան և կտարածուեն ամբողջ մարմնի մէջ, կամ երբ կենդանին և մարդը մի որ և է պատ-

ճառով կխանգարեն իրենց առողջութիւնը։ Այդ բակտերիաները կարող են լինել հիւանդ կենդանու կամ ամբողջ մարմնի մէջ կամ միայն նրա մի քանի մասերում թոքերի, ուղեղի, աղիքների մէջ և այլն. և եթէ գիտնականները հետազօտեն մարմնի հիւանդ մասերը, ամէն ժամանակ կարող են գտնել նրանց մէջ այդ պարազիտները։ Առաջ ասել էինք, որ վարակիչ հիւանդութիւններ յառաջացնող բակտերիաները կարող են ընկնել կենդանու մարմնի մէջ օդից, նմանապէս և ուտելիքի ու խմելիքի միջոցով. բացի սրանից վարակիչ նիւթը կարող է անցնել նաև ուրիշ միջոցներով. այսպէս օրինակ գիտնականները գտել են, որ մի քանի հիւանդութիւններով օդի միջոցով չէ կարելի վարակուել, անհրաժեշտօրէն հարկաւոր է, որ այդ հիւանդութիւնների բակտերիաները ընկնեն արեան մէջ, ինչպէս օրինակ կատաղութեան ժամանակ, որից հիւանդանալ կարելի է միայն այն ժամանակ, երբ կատաղած շունը կծում է մարդուն կամ կենդանուն, կամ թէ չէ, երբ այդ

շան թուքը մի կերպ ընկնում է նրանց արեան մէջ, իսկ արեան մէջ ընկնել կարող է վէրքերի, քերծուածքների միջոցով, եթէ այդպիսիները կան մարմնի վրայ։

Վարակիչ հիւանդութիւնների ընդհանուր յատկութիւնները։ Ինչով են նրանք տարբերւում ոչ վարակիչ հիւանդութիւններից։ Նրանց բժշկութիւնը, պատուաստումները։ Վարակման դէմ նախազգուշացուցիչ միջոցներ։ Խստահանում ն։

Այսուհետև մենք կաշխատենք բացատրել, թէ ինչով են զանազանւում վարակիչ հիւանդութիւնները ոչ վարակիչ հիւանդութիւններից, ինչպէս պէտք է նրանց ճանաչել և թէ ինչպէս մարդ կարող է պաշտպանել իրան և իր ունեցուածքը վարակուելուց։ Բուսական չէ միայն խմանալ հիւանդութեան էութիւնը, թէ նա ինչ է և ինչ պատճառներից է առաջ գալիս. հարկաւոր է նաև խմանալ զանազանել նրան ուրիշ վարակիչ կամ ոչ վարակիչ հիւանդութիւնից, որպէս զի իր ժամանակին նա-

խաղդուշութեան անհրաժեշտ միջոցներ ձեռք առնուին։ Երբեմն մարդու համար շատ դժուար է լինում մի հիւանդութիւն միւսից զանազանել, որովհետև մի հիւանդութեան արտաքին նշանները կարող են մի ուրիշ հիւանդութեան արտաքին նշաններին նման լինել, այնուամենայնիւ մի քանի հիւանդութիւններ կատարելապէս կարելի է զանազանել միւսներից։ Ահա հէնց այստեղ մենք կխօսենք վարակիչ հիւանդութիւնների ընդհանուր նշանների և յատկութիւնների մասին։

Իւրաքանչիւր վարակիչ հիւանդութիւն պարզւում է ոչ թէ միանգամից, այլ որոշ ժամանակամիջոց անցնելուց յետոյ. այդ միջոցը, որի ժամանակ հիւանդութիւնը ոչ մի կերպ չի արտայայտւում, անուանւում է հիւանդութեան գաղտնի շրջան կամ ծածկաշրջան (скрытый періодъ)։ Այդ շրջանի տեւողութիւնը տարբեր է լինում. մի հիւանդութեան դէպքում մի օր, իսկ մի ուրիշ հիւանդութեան դէպքում մի քանի օր, շաբաթ և մինչև իսկ ամիսներ։ Հիւանդու-

թեան այդ գաղտնի շրջանի միջոցին կենդանին նայնպէս լաւ է զգում իրան, ինչպէս և առաջ. ուտում, խմում է, միայն երբ այդ շրջանն անցնում է, հիւանդութիւնը քիչ քիչ սկսում է յայտնուել. կենդանին սկսում է տխրել, վատ է ուտում և խմում, անհանգիստ է լինում, նա ջերմում է, որ կարելի է նկատել, եթէ ձեռքերս դնենք ճակատի վրայ. բերանից, քթից, աչքերից սկսում է հոսել մի տեսակ հեղուկ, երբեմն լուծ է ունենում և այլ ուրիշ նշաններ։ Այս բոլոր նշանները կարող են ցոյց տալ, որ կենդանին ճշմարիտ որ հիւանդացել է և եթէ այդ նշանները շատ կենդանիների վրայ նկատուեն, առանց կասկածելու կարելի է ենթադրել, որ դա մի որ և է վարակիչ հիւանդութիւն է։ Բայց կան այնպիսի հիւանդութիւններ, որոնք ոչ մի տեսանելի նշաններ չեն ունենում, ինչպէս օրինակ թոքային քէրքէչի (легочный сапъ) ժամանակ. այդ հիւանդութիւնները կարելի է ճանաչել միայն անդամահատութեամբ և հիւանդոտ փոփոխուած փորոտիքը կարող է

ցոյց տալ, թէ այդ ինչ հիւանդութիւն է։

Իր և է նշաններ երևալիս, որոնք պարզ ապացուցանում են անասունների մէջ գոյութիւն ունեցող վարակիչ հիւանդութիւնը, անհրաժեշտ է խնդրել մօտակայ առնասնաբուժի խորհրդին, որպէս զի ժամանակին կամ օգնէ հիւանդացած կենդանիներին, կամ ուրիշ կենդանիների մէջ վարակիչ հիւանդութեան տարածելու դէմ անհրաժեշտ միջոցներ ձեռք առնի։ Այսպիսի դէպքերում երբէք չպէտք է դիմել դիւղական նալբանդներին կամ դալլաքներին, որովհետև նրանք, բացի վնասից, ոչինչ չեն կարող անել. փոխանակ մի տեղի հիւանդութիւնը դադարեցնելու, նրանք տարածում են ամբողջ շրջակայքում՝ առաջարկելով բժշկել հիւանդներին այնտեղ, որտեղ երբէք կարիք չկայ ձեռք դարկել այդպիսի գործի։ Շատ անգամ ականատես ենք լինում, թէ ինչպէս ինքնակոչ բժիշկները (նալբանդ-դալլաքները) միևնոյն գործիքներով տրիւն են առնում ինչպէս վարակիչ, նոյնպէս և ոչ վարակիչ հիւանդներից և այդ-

պիսով փոխադրում վարակիչ թոյնը վերջիններիս, որովհետև գործիքները ոչ միայն չեն ախտահանում, այլ մինչև իսկ չեն էլ լուանում։

Ինչ վերաբերում է վարակիչ հիւանդութիւնների բժշկութեանը, այդ շատ քիչ գործադրելի է. կան հիւանդութիւններ, որոնք բոլորովին չեն բժշկւում, որովհետև բժիշկները շատ փորձել են բժշկել, ոչինչ չի օգնել։ Ներկայումս անբուժելի հիւանդութիւն են համարւում ժանտախտը, կատաղութիւնը և ուրիշները։ Մի քանի այլ հիւանդութիւնների դէմ կան միջոցներ, որոնք թէպէտ այնքան յուսալի կերպով չեն ներդործում, այնուամենայնիւ կարող են հօտի մէջ երևցած որ և է հիւանդութեան ժամանակ պաշտպանել մահից մի քանի գլուխ անասուն։ Այդպիսի հիւանդութիւններից է օրինակ սիբիրախտը։ Կան այնպիսի հիւանդութիւններ ևս, որոնք մեծաւ մասամբ իրանք իրանց են անցնում, ինչպէս օրինակ դաբաղը. կենդանին հիւանդանալուց մի երկու շաբաթ յետոյ կաղդուր-

ւում է և առողջանում, թէպէտ, եթէ ան-
խնամ թողնուի, հիւանդութիւնը կծանրա-
նայ և բարդութիւններ կարող են յառա-
ջանալ։

Սակայն բժիշկներն այժմ լրենց ձեռ-
քում մի ուրիշ միջոց ունեն, որ աղա-
տում է կենդանուն վարակիչ հիւանդու-
թիւններից. այդ միջոցը պատուաստումն է։
Պատուաստումներից մի քանիսը հիւանդու-
թիւնների առաջն են առնում, միւսները՝
բժշկում են։ Ամէն ոք գիտէ, թէ ինչպէս
են պատուաստում մարդկանց ծաղիկը և
թէ ինչպէս այդ պատուաստումները պաշտ-
պանում են նրանց իսկական ծաղկով հիւան-
դանալուց։ Պատուաստումները, եթէ ժա-
մանակին են արուած, կատաղած շան կծե-
լու պատճառով յառաջացած մարդու ջրա-
փախութեամբ (водобоязнь) հիւանդանալու
առաջն առնում են, բայց եթէ նա արդէն
հիւանդացել է ջրափախութեամբ, պատուաս-
տումները նրան չեն կարող փրկել, միւ-
նոյն է, նա կմեռնի։ Պատուաստումները

ժանտախտով*), սիբիրախտով, դաբաղով,
ծաղիկով հիւանդանալու առաջն առնում
են։ Ընդհակառակը, մի քանի այլ հիւան-
դութիւնների ժամանակ պատուաստումները
բժշկում են հիւանդութիւնները, ինչպէս այդ
լինում է մարդկանց դիֆթերիտի ժամա-
նակ. այստեղ արդէն պատուաստումները
գործադրում են այն դէպքում, երբ մարդը
հիւանդացել է։ Պատուաստումների էու-
թիւնն այս է. վեր են առնում հիւանդ կեն-
դանուց նրա արեան, ուղեղի կամ թուքի
մէջ գտնուող վարակիչ նիւթը, թուլացնում
են նրան յայտնի միջոցներով և լուծելով
ալ և էլ հեղուկի մէջ, փոքրիկ սրսկիչ մեքե-
նայի (шприцъ) օգնութեամբ ուղղի միջոցով սրբա-
կում են կաշուի տակ և այդպիսով վարա-

*) Մ. Վ. Ննոցկին (Дѣйствительный членъ Им. Инст. Экспер. мед.) և նրա օգնական անասնաբույժ Վ. Ի. Վիժնիկեվիչը 1897 թ. վերջերին գտել են հակաժանտախտային լիմֆուկ, որը ժանտախտի դէմ կռուելու ամենալաւ միջոցն է։ Այդ մասին տես «Նոր Ժամանակների Ժանտախտը» գլխում։

կում կենդանուն այն հիւանդութեամբ, որից կամենում են նրան նախազգուշացնել։ Բայց վարակելով կենդանուն թուլացրած վարակիչ նիւթով, այնպէս են առնում, որ կենդանին միայն թոյլ կերպով է հիւանդանում. այդ պատուաստելուց յառաջացած վարակումից չի մեռնում կենդանին և միևնոյն ժամանակ ուրիշ ուժգին կերպով իսկական վարակուելու անընդունակ է դառնում, երբ վարակիչ նիւթը ընկնում է կենդանու մարմնի մէջ. կենդանին անընդունակ է դառնում վարակուելու նրա համար, որ պատուաստումների ժամանակ կարողանում է աստիճանաբար վարժուել, յարմարուել այդ վարակիչ նիւթին։ Բայց ցաւելով պէտք է ասել, որ ներկայումս պատուաստումներ են արւում ոչ բոլոր վարակիչ հիւանդութիւնների ժամանակ. պատուաստումներ չեն տեղի ունենում քէրքէշի (сапъ), թոքախտի ժամանակ, որովհետև մինչև այժմ գիտնականները դեռ միջոց չեն գտել այդ հիւանդութիւնների վարակիչ թոյնը թուլացնել, որը և միևնոյն

ժամանակ կոչուպանէր հիւանդանալուց։ Այն հիւանդութիւնների վերաբերմամբ, որոնց ոչ բժշկելն է օգնում, ոչ էլ դեռ պատուաստն է գտած, դործադրւում են ամենախիստ միջոցներ, որպէս զի այդ հիւանդութիւնները, քանի որ մի անգամ երևան են եկել, չանցնեն մեծ քանակութեամբ անասունների և մարդկանց վրայ։ Այսպէս օրինակ քէրքէշի, ժանտախտի, թոքախտի ժամանակ այս հիւանդութիւններով հիւանդացած կենդանիներին խսկոյն մորթում են, միայն մինչև մորթելը միւս կենդանիներից առանձին է պահւում։ Առանձնացնում են նոյնպէս այն բոլոր կենդանիներին, որոնք այդ սարսափելի հիւանդութիւններով վարակուելու մէջ կասկածելի են համարւում, մինչև որ պարզուի, թէ ինչ հիւանդութեամբ են նրանք տակրացել։ Եթէ հիւանդութիւնը երևացել է գիւղի մի քանի բակերում կամ ամբողջ գիւղի մէջ, այն ժամանակ բոլոր անասունները պէտք է շրջակայ գիւղերի հօտերից հեռու, առանձին պահել, որպէս զի նրանք

ես չվարակուեն։ Վերջապէս որպէս զի մարդ կարողանայ թէ իրեն բոլորովին ազատ պահել որ ես է վարակիչ հիւանդութիւնից և թէ իր անասունները չարդից, որ կարող է յառաջանալ այդ միևնոյն հիւանդութիւններից, բաւական չէ միայն հիւանդ անասունները առողջներից բաժանելը, բաւական չէ նոյն իսկ նրանց ոչնչացնելը,—վարակիչ նիւթը յաճենայն դէպս կարող է մնալ այն բնակարաններում, որտեղ եղել է հիւանդ անասունը և այնտեղից տարածուելու անհրաժեշտ է նոյնպէս առանձին խնամքով ախտահանութեան ենթարկել։ Մենք արդէն գիտենք, որ սիբիրախտով հիւանդացած կենդանին միշտ արտադրում է իրանից վարակիչ նիւթ թէ կղկղանքների և թէ թուքի միջոցով. կղկղանքները և թուքը ընկնում են հիւանդ կենդանիների ապրած բնակարանների զանազան անկիւնները և ճեղքերը. եթէ ամբողջ այդ բնակարանը և նրա մէջ գտնուող առարկաները չմաքրենք, եթէ որ ես է միջոցներով չոչնչացնենք վարակիչ արտաթորութիւնները, այն

ժամանակ երբէք հնարաւորութիւն չենք ունենայ մեր անասունների միջից այդ հիւանդութիւնը վերջացնել, հետևապէս և չենք ազատուի այն վնասներից, որոնք կարող են տեղի ունենալ հիւանդութեան տարածուելուց. հիւանդութիւնը կամ միանգամից կոչնչացնէ բոլոր անասուններին, կամ, նայած նրանց մէջ յառաջացած հիւանդութեան, կամաց հօտից մէկիկ մէկիկ դուրս կորզել։

Ախտահանումն նշանակում է վարակիչ նիւթի ոչնչացում, որտեղ էլ նա լինի. բնակարաններում, տաքի վրայ, ախոռում, մզուրների, կենդանիներին խնամողների շորերի, ամանների վրայ և այլն։ Ախտահանելու համար գործ են ածում սովորաբար տատիկ թունաւոր միջոցներ, միայն նրանցից ամենալաւը համարւում է սուլեման (сулема). սրա մի մասը լուծում են 1000 մաս ջրում, և որպէս զի լաւ լուծուի՝ աւելացնում են նաև մի քիչ հատարակ աղ։ (մի վեդրո ջրի մէջ պէտք է լուծել 3 մսխալ սուլեմայ և 10 մսխալ

Ժամանակ երբէք հնարաւորութիւն չենք ունենայ մեր անասունների միջից այդ հիւանդութիւնը վերջացնել, հետևապէս և չենք ազատուի այն վնասներից, որոնք կարող են տեղի ունենալ հիւանդութեան տարածուելուց. հիւանդութիւնը կամ միանգամից կոչնչացնէ բոլոր անասուններին, կամ, նայած նրանց մէջ յառաջացած հիւանդութեան, կամաց հօտից մէկիկ մէկիկ դուրս կորզել։

Ախտահանումն նշանակում է վարակիչ նիւթի ոչնչացում, որտեղ էլ նա լինի. բնակարաններում, տաքի վրայ, ախոռում, մզուրների, կենդանիներին խնամողների շորերի, ամանների վրայ և այլն։ Ախտահանելու համար գործ են ածում սովորաբար տատիկ թունաւոր միջոցներ, միայն նրանցից ամենալաւը համարւում է սուլեման (сулема). սրա մի մասը լուծում են 1000 մաս ջրում, և որպէս զի լաւ լուծուի՝ աւելացնում են նաև մի քիչ հատարակ աղ։ (մի վեդրո ջրի մէջ պէտք է լուծել 3 մսխալ սուլեմայ և 10 մսխալ

աղ)։ Լաւ միջոց է նաև կարբոլաթթուն (карболка), որից նոյնպէս պատրաստում են լուծուածք. մի մասը 20 մաս ջրի մէջ (մի վեդրո ջրի հետ $1\frac{1}{2}$ դրամ. կարբոլաթթու)։ Դործ են ածում նոյնպէս և բորակաթթու (борная кислота), որի 4 մասը պէտք է լուծել 100 մաս ջրի մէջ և շատ ուրիշ միջոցներ, որոնք բժշկի պատուէրով միայն կարելի է ձեռք բերել։ Սովորական մարդիկ այդ միջոցները դժուարութեամբ են կարողանում ձեռք բերել, նախ նրա համար, որ գիւղում չի գտնուի, պէտք է գնալ քաղաք դեղատնից վերցնել և երկրորդ, որ առանց դեղատուսի, դեղատնից ամէն մարդու այդ տեսակ դեղեր չեն տալիս։ Գիւղում վերոյիշեալ միջոցները ձեռք չը բերած դէպքում կարելի է օգտուել ուրիշ այնպիսի միջոցներից, որոնցից հեշտութեամբ կարելի է գտնել տանը կամ հարևանի մօտ։ Այսպէս օրինակ յատակները, պատերը, ախոռները, մսուրները, սայլերը ախտահանելու համար կարելի է գործածել ամենաթունդ, որքան այդ հնարաւոր է պատ-

բաստել, տաք մոխրաջուր (горячій щелокъ), չհանդած կիր, որը փռում են յատակի կամ գետնի երեսին, իսկ յետոյ վրան ջուր ցանում, կամ վեդրոյի մէջ լուծուածք*) պատրաստելով, ուելով շաղ են տալիս։ Անասունների սարքերը ախտահանելու համար գործ են ածում կիչու մաքուր ձիւթ (березовый деготь) կամ բևեկն (скипидаръ)։

Բակերի կամ ամբողջ գիւղի ախտահանումը կատարւում է հետևեալ եղանակով. գոմերի և բակում եղած աղբը, հողը, որոնց վրայ վերջները հիւանդ կենդանին պառկել կամ ման է եկել, պէտք է դաշտ կրել և այնտեղ այրել (նախապէս հարկաւոր է վրանները լցնել նաւթ, որ վառուի) կամ խորը հերկելով խառնել հողի հետ։ Ախ-

*) Եթէ վերցնենք չհանդած կիր և վրան ջուր ածենք, կտեսնենք որ կիրը տաքանում է, ֆչչում, ցրիւ է գալիս և նրանից գոլորշի է բարձրանում։ Եթէ այդ ստացած կրի մի մասի վրայ 4 մաս ջուր լցնենք՝ու խառնենք, կստանանք կերոսջուր կամ կրակաք։

տահանութեան համար պատրաստած մոխրաջրով, կրաջրով և այլ լուծուածքներով առատ կերպով պէտք է ջրկենել երկրի այն մասը, որտեղ պառկած էր կենդանին, շաղտալ պէտք է գոմերի կամ ախոռների յատակները, պատերը, առաստաղները (օճորքները), մսուրքները և այլն։ Սրսկել պէտք է այնպէս, որ ամէն մի փոս, ամէն մի ծակ ու ծուկ լցուի կրաջրով կամ որ և է այլ լուծուածքով. յատակի վրայ պէտք է կրաջուր այնքան ածել, որ ծածկէ գետինը։ Այս գործողութիւնը պէտք է կատարել պարտէզներում գործածուող ցնցուղով կամ ուղղակի աւելով, ճիլոփով կամ շորի կտրով։ Սարքը, կառքերը, սահնակները և այն ամէնը, ինչի հետ որ շփումն է ունեցել հիւանդ կենդանին, պէտք է տանել մի յարմար տեղ և այնտեղ վրանները վերոյիշեալ լուծուածքից սրսկել կամ կիչի ձիւթ քսել. միւս մնացած սակաւարժէք ունեցող առարկաները (մանաւանդ փայտեայ ամանները) այրել պէտք է անպատճառ։ Վարակիչ հիւանդութիւնից մե-

ռած կենդանին խնամքով պէտք է փաթաթել խոիրի կամ ճիլոփի մէջ, նախապէս փակելով դիակի բոլոր անցքերը խոտով, որպէս զի ճանապարհին մեռած կամ սպանած դիակից արիւն չհոսէ։ Դիակը թաղելուց յետոյ խոիրը կամ ճիլոփը, որի մէջ նա փաթաթուած էր, նաև փուռածքը, որի վրայ նա պառկած էր, նոյնպէս և սահնակը, եթէ մեծ դին չունի, հէնց նոյն տեղում պէտք է այրել։ Մի քանի օր յետոյ ախտահանութեան ենթարկած բնակարանը պէտք է քամուն տալ (проевѣтривать), որի համար բաց են առնում բոլոր դռները և լուսամուտները, որպէս զի միջանցուկ քամի յառաջանայ. այս միջոցն ևս նպաստում է վարակիչ նիւթի ոչնչանալուն։

Վերջապէս չի կարելի չյիշել բոլոր վարակիչ հիւանդութիւնների ժամանակ գործադրուող ընդհանուր միջոցները. այդ միջոցները սրանք են. հարկաւոր է վերին աստիճանի զգուշութիւն պահպանել վարակուած դիակը սահնակի կամ կառքի վրայ դնելիս, ճանապարհին և նոյնպէս հորելիս,

որպէս զի չապականուեն նրա հետ գործ ունեցողները. եթէ այդպիսի բան պատահի, պէտք է խակոյն շորերը և կօշիկները ախտահանել. դիակը հողելիս անհրաժեշտ է մորթին զանազան ուղղութեամբ՝ թէ երկարութեամբ և թէ լայնութեամբ կտրատել, որպէս զի յետոյ կաշուի պատճառով ծածուկ չդան փորեն ու հանեն. այդպիսի բաներ շատ կպատահի գիւղերում, եթէ այս նախազգուշութիւնները ձեռք առնուած չը լինեն։ Դիակը պէտք է թաղել ամենաքիչը երկու ու կէս արշին խորութեան մէջ վարակուած կենդանիներին թաղելու համար առանձնապէս նշանակուած հողաբաժնում. այդ հողաբաժինը պէտք է գետերի և լճերի ափերից հեռու լինի. հեռու պէտք է լինի նաև մեծ, բանուկ ճանապարհներից և արօտատեղերից, որպէս զի անասունները ոչ մի դէպքում հնարաւորութիւն չունենան այնտեղ ընկնել. բացի դրանից այդ հողաբաժինը աւելի մեծ նախազգուշութեան համար պէտք է ցանկապատել. սրանց գերեզմանները խրաքանչիւր տարի պէտք է կա-

նոնաւորել, որովհետև սովորաբար մի քանի ժամանակ անցնելուց յետոյ իջնում, քանդւում են և նրանց տեղ փոսեր են գոյանում, որտեղ անձրևների ժամանակ ջուր կարող է հաւաքուել, որ կարող է վարակիչ թոյնը տարածելու աղբիւր ծառայել։

Հէնց այստեղ մենք կվերջացնենք մեր խօսքը վարակիչ հիւանդութիւնների մասին և կանցնենք նկարագրելու իւրաքանչիւր վարակիչ հիւանդութիւն առանձին։ Առայժմ կանգ կառնենք մեզանում յաճախ տեղի ունեցող ժանտախտ հիւանդութեան մասին։

ԵՂՋԻՒՐԱՒՈՐ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԺԱՆՏԱԽՏ

Կենդանիների բոլոր վարակիչ հիւանդութիւններից ամենազարհուրելին և ամենավտանգաւորը համարւում է ժանտախտը (չումա), որովհետև շատ հեշտութեամբ է տարածւում նոյն իսկ ամենահեռաւոր տեղերը. ոչ մի ուրիշ հիւանդութիւն ամենակարճ ժամանակում այնքան զոհեր չի տանում, որքան այս հիւանդութիւնը։ Ժանտախտը համարեա անբուժելի և խիստ վարակիչ մի հիւանդութիւն է բոլոր որոճող կենդանիների՝ խոշոր եղջիւրաւոր անասունների, ոչխարների, այծերի, ուղտերի համար *). միւս կենդանիները, մանաւանդ

*) Ոչխարները, այծերը և ուրիշները ժանտախտով հիւանդանալու աւելի պակաս տրամադիր են, քան խոշոր եղջիւրաւոր անասունները։ Թէպէտ այս կենդանիներն ևս ժանտախտով հիւանդանում են, բայց երբէք այն աստիճան մեծ կոտորածներ չեն կրում, որքան խոշոր եղջիւրաւոր անասունները։

մարդը, ազատ են այդ մահացուցիչ հիւանդութիւնից։ Ամէն մի եղջիւրաւոր անասուն իր կեանքում միայն մի անգամ կարող է հիւանդանալ ժանտախտով։

Ժանտախտի հայրենիք համարում են կենդրոնական Ասիան, Սիբիրը, Մոնղոլիան, Պարսկաստանը, որտեղ նա դեռ դոյութիւն ունէր Քրիստոսի առաջին դարերում։ Այս տեղերից ժանտախտը հին ժամանակներից սկսած անասունների հօտերի միջոցով անցել է Եւրոպա և երբեմն երբեմն մեծամեծ կոտորածներ յառաջացրել։ Այս աւերիչ հիւանդութիւնը առաջին անգամ Եւրոպայում յայտնուեց IV դարու սկզբին և այդ ժամանակուանից սկսած հաստատուեց Ռուսաստանի հարաւային մասերում՝ Սև և Կասպից ծովերի մօտ, որտեղից և ժամանակ առ ժամանակ տարածուեց ամբողջ Եւրոպա, բացի ամենահեռաւոր երկրները (Իսպանիա, Զուիցերիա)։ Ամերիկայում և Աւստրալիայում այս հիւանդութիւնը գոյութիւն չունի, իսկ Աֆրիկայում պատահաբար յայտնուեցաւ և մուտ գործեց Եւ-

ռոպայից և Ասիայից։ XVIII դարում Եվրոպան ժանտախտից կորցրել է 200 միլիոն խոշոր եղջերաւոր անասուն, իսկ Ռուսաստանը իւրաքանչիւր տարի ունենում էր համարեա 300,000—1,000,000 ռուբ. կորուստ։ Ներկայումս, չնորհիւ ձեռք առած մի շարք խելացի միջոցների, արևմտեան Եվրոպական պետութիւնների մէջ համարեա այլ ևս ժանտախտ չի պատահում, իսկ Ռուսաստանում դեռ ութիւն ունի միայն հարաւային և հարաւարևելեան ծայրերում (Աստրախանի, Եկատերինոսլաւի, Թերսոնի, Օրենբուրգինահանգներում և Դոնի շրջանում), հիւսիսային Կովկասում, Անդրկովկասում և Սիբիրիայում։ Ժանտախտը մինչև այժմ էլ շարունակում է իր կոտորածը Չինաստանում, Միջին Ասիայի սարահարթում, երբեմն երևան է գալիս արևելեան Հնդկաստանում, Հնդկաստանի կղզիների վրայ, Պարսկաստանում և Տաճկաստանում։

Ժանտախտի վարակիչ նիւթի յատկութիւնը և ժանտախտով վարակուելու միջոցները.

Եղջերաւոր անասունները ժանտախտով հիւանդանում են այն դէպքում, երբ նրանց մարմնի մէջ միայն այդ հիւանդութեանը յատուկ առանձին տեսակի գընդաձև բակտերիաներ են հասատաւում և զարգանում։ Ժանտախտի բակտերիաների կեանքի բնաւորութեան պայմանները դեռ լաւ չեն ուսումնասիրուած, այդ պատճառով էլ նրանց կեանքի բնաւորութեան և զարգացման պայմանների վերաբերմամբ դեռ ոչինչ չի կարելի ասել։ Ցայտնի է միայն, որ ժանտախտի վարակիչ նիւթը թռչող տեսակիցն է, այսինքն ընդունակ է մի որոշ տարածութեան մէջ տարածուել օդում, որ այդ վարակիչ նիւթը ընդունակ է բազմանալու միայն կենդանու մարմնի մէջ, նրա մարմնից դուրս (ջրի, օդի, հողի մէջ) նա անկարող է զարգանալ. ժանտախտի վարակիչ թոյնը ընդունակ է քայքայուելու լոյսի, սաստիկ հողմնահարութեան (քամուն տալ),

չոգու, չորութեան ազդեցութեան տակ։ Դիակի քայքայուելովն ևս ոչնչանում է վարակիչ նիւթը. թաղուած դիակի մէջ ժանտախտի այդ թոյնը որոշ պայմաններում իր գոյութիւնը պահպանում է մինչև 3 ամիս։

Արդէն անվիճելի է, որ ժանտախտի միկրոբը այնքան դիմացկուն չէ և թէպէտ աղբի կամ հողի մէջ կարող է մինչև կէս տարի կենդանի մնալ, սակայն օդի մէջ երկու շաբաթից աւելի երբէք չի կարող կեանք ունենալ. բայց եթէ հողմնահարելը բաւարար չափով տեղի չունենայ և չափաւոր խոնաւութիւն լինի, ժանտախտի վարակիչ նիւթը կարող է պահպանել իր գոյութիւնը գոմերում, աղբի, խոտի, դարմանի մէջ մինչև չորս և դեռ աւելի ամիսներ։

Երբ եղանակը շոգ է և չոր, ժանտախտի վարակիչ նիւթը տարածւում է օդի միջով 20—30 քայլ, իսկ խոնաւ ժամանակ մինչև 150 քայլ։ Վարակիչ նիւթը գտնւում է հիւանդ կենդանու մարմնի բոլոր մասե-

րում՝ արեան, մսի, կաշուի, նաև արտաթորութիւնների (թուքի, աղբի, մէզի մէջ) և շուրջն եղած խոտի, հողի մէջ և այլն։

Շնորհիւ ժանտախտի վերին աստիճանի վարակիչ յատկութեան, կենդանիները վարակուել կարող են ոչ միայն հիւանդ կենդանիներին քսուելով, այլ և նրանց աղբի, դարմանի, խոտի, բրդի, կաշուի միջոցով. յաճախակի վարակուելու աղբիւր է համարւում նմանապէս և ժանտախտով հիւանդացած և մորթած կենդանիների միսը։ Վարակիչ թոյնը տարածել կարող են նաև այն մարդիկ, որոնք շփումն ունեն կենդանիների հետ (մսավաճառները, անասնավաճառները, մշակները), նոյնպէս երկաթուղիների վագոնները, եթէ անասուններ փոխադրելուց յետոյ լաւ մաքրած, ախտահանած, քամուն տուած չեն։

Ժանտախտի նշանները.

Բոլոր որոճող կենդանիների ժանտախտի նշանները նոյնն են։

Պէտք է ինկատի ունենալ, որ նախ քան հիւանդութեան արտաքին նշանների երևալը, տեղի է ունենում նրա գաղտնի շրջանը կամ ծածկաշրջանը, որ տևում է մօտ 4—9 օր, երբեմն էլ աւելի՝ 2 շաբաթ։ Վարակուելու րոպէից այդքան ժամանակ անցնելուց յետոյ երևում են ժանտախտով հիւանդանալու առաջին արտաքին նշանները, որոնք բաւական ընդարձակ են և քիչ թէ շատ փորձուած մարդը դժուար թէ չփոթէ ուրիշ հիւանդութիւնների հետ, թէպէտ այս հիւանդութիւնը մասամբ յիշեցնում է մի քանի այլ հիւանդութիւններ՝ ինչպէս ընդհանուր բորբոքիչ տենդը (злокачественная катарральная горячка), դաբաղը, արիւնամիզութիւնը, մասամբ էլ սիբիրախտը, կատաղութիւնը և թոքային տարափոխիկ բորբոքումը. երբեմն անփորձ մարդը կարող է մինչև իսկ հասարակ լուծի հետ չփոթել։ Այս հիւանդութիւնների և ժանտախտի միջև եղած տարբերութիւնը աւելի ճիշտ որոշել կարող է անասնաբուժը։ Ահա այս պատճառով անասունների մէջ ժան-

տախտի նման հիւանդութիւն երևալիս աւելի լաւ է իսկոյն իմաց տալ տեղական անասնաբուժին, որպէս զի հնար լինի օր առաջ միջոցներ ձեռք առնել դադարեցնելու այս աւերիչ վարակիչ հիւանդութիւնը։

Հիւանդութեան իբրև առաջին նշան համարւում է մարմնի տաքութեան բարձրանալը, որից կենդանին շատ տանջւում է և որը սկզբի օրերում հասնում է 39—40°, իսկ հետևեալ օրերում մինչև անգամ 40—42° (եղջիւրաւոր անասունների բնական տաքութիւնը՝ 38,5°)*, զարկը սկսում է արագա-

*) Կենդանիների մարմնի տաքութիւնը չափում են նոյնպիսի ջերմաչափով, ինչպէս և մարդկանցը, միայն գնելիս աւելի լաւ է ընտրել այնպիսի ջերմաչափ, որի սնդիկի սիւնը տաքութիւնը չափելուց յետոյ իսկոյն չիջնի։ Անասնաբուժական հետազօտութիւնների համար աւելի պէտքական է համարւում ապակեայ գլուխ ունեցող այսպէս անուանուած «մաքսիմալնի» ջերմաչափերը։ Մարմնի տաքութիւնը չափելու համար ջերմաչափի ծայրը պէտք է դնել կենդանու յետոյքի անցքի մէջ։

նալ՝ 60—120 և լինում է թույլ, չնչառութիւնն սկսում է աւելի արագ կատարուել։ Տաքութիւնից ամբողջ մաղասամաշկը, մանաւանդ մարսողութեան ճանապարհինը, առանձնապէս բորբոքուած վիճակի մէջ է գտնուում։ Կենդանին ամբողջ ժամանակը տխուր տրտում, խիստ յոգնած է երևում, ականջները կախում է և գլուխը քարշ ձգած պահում, հայեացքը անշարժանում է, բուրդը կամ մաղը ղղգղուած է լինում և գլուխը շարժում այս ուայն կողմ։ Հիւանդութեան սկզբներում յառաջացած կենդանու մարմնի տաքութեան բարձրանալու պատճառով կաթնատուների տուած կաթի քանակը յանկարծ պակասում է մի երրորդ մասով կամ կիսով չափ. նկատւում է նաև ընդհանուր թուլութիւն, ախորժակի բացակայութիւն. հիւանդ կենդանիներն համարեա չեն որոճում, մթնագոյն, չոր և մաղասով ծածկուած կղկղանքը դժուարութեամբ և շատ քիչ է արտադրւում, որին հետևում է նաև փորլուծութիւն։ Մաղասամաշկը կարմրելուց յետոյ, վերջերը, մանաւանդ շրթունքների,

ընդերքի, լեզուի, այտերի և առհասարակ տեսանելի մաղասամաշկի վրայ նկատւում են ժանտախտին յատուկ փոքրիկ դեղնակարմիր բծեր, որոնք շուտով վերևից թույլ կերպով ծածկւում են մոխրագոյն դեղին թանձրացած փառով, քոսերով. եթէ այդ բծերը մատներով քորենք, քոսերը կսկսեն անհաւասար կերպով պոկուել և նրանցից արիւն հոսել։ Քոսերը վայր թափուելուց յետոյ մնում են մութ կարմրագոյն հետքեր—սկրթուկներ։ Դրանք են համարւում ժանտախտի խիստ բնորոշ նշանները. ոչ մի այլ հիւանդութեան ժամանակ այդպիսի բաներ երևան չեն գալիս։

Ժանտախտը քանի առաջ գնայ, այնքան հիւանդութիւնն աւելի կտրուկանայ։ Հետզհետէ զարգանում է կենդանու անբզդայութիւնը, մարմնի զանազան մասերում նկատւում են դող, ցնցումներ. կենդանին հառաչում, ատամները կրճտացնում է, ոտները սառչում են, հիւանդը սաստիկ ծարաւութիւն է զգում և բոլորովին նուազում է. հիւանդութեան երկրորդ, երրորդ

օրը աչքերը կարմրում են, բերանից, քթից և աչքերից հոսում է մի տեսակ հեղուկ նիւթ. շնչառութիւնը քանի գնում աւելի և աւելի արագանում է, տեղի է ունենում կարճատև խուլ հաղ, իսկ 2—3 օր անցնելուց յետոյ ունենում է նաև առատ լուծ, որ լինում է ջրալի, լորձիւնոտ, երբեմն մինչև իսկ արիւնալից. մէզը մութ դեղնագոյն է լինում։ Ցաճախ հիւանդութեան սկզբում կովերի ստինքի, որովայնի, աղդրի ներքևի մակերևոյթի, ամորձապարկի և շէքի վրայ երևան են գալիս փամփշտաձև պղուկներ, իսկ հնչտոցը (маточный рукавъ), արտաքին սեռական գործարանը և յետոյքի անցքը կարմրում են և տաքանում։ Այսպիսի պայմաններում կենդանին երկար չէ կարող դիմանալ և ապրել, մի շաբաթից յետոյ նա կմեռնի։ Մահից առաջ մարմնի բարեխառնութիւնը իսկոյն իջնում է 36 աստիճանից ցած, կենդանին մեռնում է կամ բոլորովին հանդարտ, կամ ջղաձգութիւններից և ցնցումներից յետոյ։

Նայած կենդանու տեսակին և հիւանդութեան սաստկութեանը, հիւանդութեան ընթացքը և վախճանը խիստ տարբեր է լինում։ Երբեմն հիւանդութեան նշանները բաւական պարզ են լինում, և 8 օրից յետոյ տեղի է ունենում կատարեալ առողջութիւն։ Աւելի ծանր դէպքերում ժանտախտի նշաններն աւելի պարզ նկատելի են դառնում և 4—5-րդ օրը հիւանդութիւնը հասնում է ամենաբարձր աստիճանի, որից յետոյ հիւանդը կամ մեռնում է, կամ աստիճանաբար 8—14 օրուայ մէջ առողջանում, թէպէտ մարսողութեան խանգարումը դեռ առժամանակ ժանտախտից յետոյ էլ մնում է։ Համաճարակի սկզբում խոշոր եղջիւրաւոր անասունների շատ տեսակների կորուստը հիւանդների 95% է կազմում, միայն երբ հիւանդութեան զարգանալու պայմանները անբարեյաջող են, այդ տոկոսը իջնում է մինչև 70-ի, իսկ վերջում՝ 50%։ Մեծ եղջիւրաւոր անասունների մի տեսակը կայ (сѣрый скотъ), որից համաճարակի սկզբում մեռնում է 50%, իսկ վերջը մինչև 30%։ Պատուաստ-

ման դէպքում վերջիններից մեռնում են 6—12 %։ Այս հիւանդութիւնը տևում է 4 մինչև 7 օր։

Ժանտախտի դէմ կռուելու եղանակներ.

Եղջիւրաւոր անասունների ժանտախտը ամենավտանգաւոր վարակիչ հիւանդութիւն լինելով, նրա առաջն առնելու և բոլորովին դադարեցնելու համար հարկաւոր են խիստ զօրեղ միջոցներ, որովհետև չկայ ոչ մի ուրիշ հիւանդութիւն, որ սրա նման այնքան արագ տարածուի և այնքան մեծ թուով զոհեր ունենայ։ Մի քանի շաբաթուայ ընթացքում ժանտախտը սպանում է ամբողջ հօտեր, տարածուելով թէ մօտակայ և թէ հեռաւոր շրջանները։ Համարեա բոլոր եղջիւրաւոր անասունները ենթակայ են լինում այդ հիւանդութեանը և շատ քիչերն են առողջանում։

Դժբաղդաբար ժանտախտով հիւանդ կենդանիների բժշկութիւնը երբէք օգտակար չի եղել, ընդհակառակն աւելի սաստ-

կացրել է հիւանդութիւնը, ահա այս պատճառով սրա բժշկութիւնը արևմտեան և բոպայի բոլոր պետութիւնների մէջ, մինչև իսկ Ռուսաստանում, օրէնքով արգելուած է։ Մինչև այժմ ժանտախտի դէմ ձեռք առած անօգուտ համարուած միջոցներից են աղաթթուն, հասարակ աղը, քինաքինան, կարբոլի և սոկերոտակի թթուտները, կաշուի տակ զանազան դեղեր սրսկելը, յոդնայով ուղիղ աղիքը սոկերոտակի թթուտախառն ամանչի ջուր (іодная вода) ներս սրսկելը և այլն։

Ժանտախտի ժամանակ հիւանդ և բոլոր կասկածելի կենդանիներին առողջներից բաժանելն, առանձնացնելն և աննպատակայարմար մի բան է շնորհիւ այդ հիւանդութեան վերին աստիճանի վարակիչ յատկութեան և անսովոր արագութեամբ տարածուելուն։ Ահա հէնց այդ է պատճառը, որ դեռ անցեալ դարում արևմտեան Եւրոպայում առաջարկուեց ժանտախտով հիւանդ կենդանիներին սպանել, իբրև եղջիւրաւոր անասունների ժանտախտը դադարեցնելու միակ

և ամենաուղիղ միջոց. այս միջոցը երկար ժամանակ համարւում էր գործադրելու իբրև չափազանց խիստ միջոց, սակայն ամենայն տարուայ ժանտախտից յառաջացած կոտորածները ստիպեցին ընդունել և գործադրել այդ միջոցը։ Եւ ճշմարիտ որ, այն ժամանակուանից, երբ այդ միջոցը հաստատապէս սկսեց գործադրուել արևմտեան Եւրոպայում, ժանտախտը դադարեց կոտորածներ անել և այնուհետև ժանտախտով հիւանդացած կենդանիներին սպանելն արևմտեան Եւրոպայում օրէնք դարձաւ։ Մեզանում՝ Ռուսաստանում ժանտախտով հիւանդ կենդանիներին սպանելու օրէնքը մուտ գործեց առաջին անգամ 1876 թ., և հէնց այդ ժամանակուանից սկսած, շնորհիւ այդ միջոցի գործադրութեան, Ռուսաստանն ևս սկսեց ազատուել, մաքրուել ժանտախտից և միայն ներկայումս երբեմն երբեմն երևան է գալիս Ռուսաստանի ամենահեռաւոր ծայրերում։ Կարելի է յուսալ, որ հեռու չէ այն բաղդաւոր ժամանակը, երբ ամբողջ

Ռուսաստանն ևս բոլորովին կազատուի ժանտախտից՝ անտանապահութեան այդ սարսափելի թշնամուց։

Անհրաժեշտ է, որ ամէն ոք ժանտախտի ժամանակ վարուի այնպէս, ինչպէս խորհուրդ կտայ տեղական բժշկական-ոստիկանական իշխանութիւնը, ինչպէս այդ որոշում է օրէնքը. այսպիսի դէպքում օրէնքից շեղուողը ոչ միայն իրեն է վնասում, այլ նաև շատ դժբաղդութեանց և կորուստների պատճառ է դառնում։ Այն տեղերում, որտեղ անասունների մէջ ժանտախտ է երևացել, սահմանները պէտք է փակել, այսինքն պահապաններ դնել, որոնց պարտականութիւնն է հսկել և վարակուած տեղից թոյլ չտալ անասուններ տեղափոխել մի այլ տեղ և ընդհակառակը. արգելել պէտք է նոյն իսկ միս արտահանելը։ Բացի սրանից օրէնքով ժանտախտով հիւանդացած ամէն մի եղջիւրաւոր անասուն պէտք է սպանել, սնչացնել։ Նոյն կերպ պէտք է վարուել նաև՝ կասկածելի կենդանիների հետ, որոնք անմիջական շփումն ունեն ժան-

տախտով հիւանդացածների հետ։ Անհրաժեշտ է նաև ոչնչացնել հիւանդ անասունների հետ շփումն ունեցող բոլոր իրերը, իսկ հիւանդ կենդանիների ամբողջ բնակարանը պէտք է լաւ ախտահանել։ Սպանած անասունների և ոչնչացրած առարկաների փոխարէն դաւառական վարչութիւնը կվարձատրէ։

Վերջերս եղջիւրաւոր անասունների ժանտախտի դէմ կռուելու համար դտած նոր, օգտակար և մատչելի միջոցը՝ արիւնային շիճուկը, խիստ մեծ և անգնահատելի ծառայութիւն է մատուցանում անասնապահութեանը։ Ինչպէս յայտնի է, զանազան կենդանիների արիւնային շիճուկը շատ օգուտներ է տուել ինչպէս զանազան հիւանդութիւններ բժշկելովը, նոյնպէս և հիւանդութիւններից պաշտպանելովը։ Ներկայումս այդ միևնոյն շիճուկը ժանտախտի դէմ կռուելու ամենահիանալի միջոցն է։ Մ. Վ. Նենցկին (Дѣйствительный членъ Им. Инст. Экспер. мед.) և նրա օգնական անասնաբոյժ Վ. Ի. Վիժնիկեվիչը 1897 թ. վեր-

ջերին Տփխիսի նահանգի Գորու դաւառի Իկնելի ագարակում աշխատելով եղջիւրաւոր անասունների սոյն հիւանդութիւնը բուժշկել հակաժանտախտային շիճուկով, եկան այն եզրակացութեան, որ առողջ եղջիւրաւոր անասունները որպէս զի հեշտութեամբ չհիւանդանան ժանտախտով, պէտք է միամեայ հորթերի և դրանցից աւելի հասակաւոր անասունների կաշուի տակ 0,2 խոր. սանտ. ժանտախտով հիւանդացող կենդանու արիւն սրսկել. մատաղ հորթերին՝ 0,1 խոր. սանտ.։ 2—4 ժամ անցնելուց յետոյ մարմնի միւս մասում ևս կրկին պէտք է սրսկել 20—40 խոր. մմ. շիճուկ, որ ստացուել է այն կենդանիներից, որոնք արդէն խիստ անընդունակ են դառել այդ հիւանդութեամբ վարակուելու։ Ներս սրսկած շիճուկի քանակութեանը նայած՝ կենդանին կարող է ընդունակ լինել այդ հիւանդութեանը, մշտապէս ազատուել նրանից և կամ, եթէ շիճուկը քիչ է, կարող է հակազդեցութիւն ունենալ, այսինքն 5—8 օրուայ ընթացքում կենդանու մարմնի տաքութեան

աստիճանը կարող է բարձրանալ։ Երկու դէպքերում կենդանին չի հիւանդանում ժանտախտով. եթէ կաշուի տակ շատ քիչ քանակութեամբ շիճուկ է սրսկած, կենդանին կարող է շատ ծանր հիւանդանալ և վարլուծութիւն ունենալ։ Այս նկարագրած միջոցն այն առաւելութիւնն ունի, որ այսպիսի դէպքում ժանտախտի միկրոբը չի տարածւում և վարակում աշտարդած կղկղանքի միջոցով և երկրորդ՝ որ կենդանու կաթը չի խանգարւում և ոչ մի փոփոխութեան չի ենթարկւում։

Հակաժանտախտային շիճուկը ոչ միայն իբրև նախազգուշացուցիչ միջոց է, այլ և բժշկելու յատկութիւն ունի։ Եթէ հիւանդութեան առաջին կամ երկրորդ օրը (երբ կենդանու վրայ նկատելի է լինում բաւականաչափ բարձր աստիճանի տաքութիւն, որը տեղի է ունենում սովորաբար վարակուելուց 4 կամ 5 օր յետոյ) կենդանու կաշուի տակ 100—200 խոր. մմ. հակաժանտախտային շիճուկ սրսկուի, դուցէ հընարաւոր լինի կենդանուն ազատել մահից։

Բայց եթէ հիւանդութիւնը բաւականաչափ առաջ է գնացել, եթէ կենդանին լուծ ունի, շիճուկն այլ ևս ազդեցութիւն չի ունենում։

1898 թ. հոկտեմբերին կառավարութեան կողմից նշանակուած առանձին յանձնաժողովը ստուգելով պ. Նենցկու ցոյց տուած այս միջոցը եկաւ այն եզրակացութեան, որ յիշեալ միջոցը ժանտախտի դէմ կռուելու ամենայարմար և միակ օգտակար միջոցն է։

Առանձին գրքերով լոյս տեսած իմ աշխատութիւնները.

1. Տառապեալների ծառայ Թօխը և Կորած բարեկամը (Թարգ.) . . . 15 կ.
2. Ֆաբիոլա (Թարգ.) . . . . . 20 »
3. Երկրագործ. անհրաժեշտ գիտելիքներ. 50 »
4. Մեղուաբուծութիւն . . . . . 50 »
5. I. Կենդանիների վարակիչ հիւանդութիւնների մասին ընդհանուր հասկացողութիւն. II. Եղջիւրաւոր անասունների ժանտախտ . . . . 8 »

ԳԻՆՆ Ի 8 ԿՊԵԿ.